Այն դեպքում , եթե Դաշնային Հանրապետության միգրանտների եւ փախստականների գերատեսչության կողմից ուղարկված/ հանձնված/ տեղեկությունը արտաքսման կամ արտաքսելու սպառնալիքի մասին է, ապա պետք է ի նկատի առնել հետևյալ ցուցմունքները

Կարեւոր ծանուցումներ ըստ կեցության իրավունքի (կեցության իրավունք)

Իրազեկում ըստ կեցության իրավունքի § 60a պարբ. 2d

Եթե Դուք որոշակի հիվանդություն ունեք, որը կարող է խոչընդոտել արտաքսումը, ապա այն պետք է ապացուցեք բժշկական տեղեկանքով: Դուք պարտավոր եք անմիջապես Ձեր բնակավայրի օտարերկրացիների գերատեսչությանը ներկայացնել բժշկական այդ տեղեկանքը: „Անմիջապես“-ի առանձնահատուկ պայմանը բժշկական տեղեկանքի ամսաթիվն է: Եթե բժշկական տեղեկանք տրված լինի, որ արտաքսումը կվնասի Ձեր անչափահաս երեխաներին / երեխային, ապա դա էլ պետք է ներկայացնեք:
Եթե Դուք տեղեկանքը ժամանակին չներկայացնեք կամ ուշացնեք, ապա արտաքսման հարցում հաշվ չի առնվի բժշկական ախտորոշման տեղեկանքը: Ձեր բացատրությունը, որ Դուք կամ Ձեր անչափահաս երեխաներից մեկը հիվանդություն ունի, ի նկատի չի առնվի արտաքսման պահին: Այսպես կլինի նաև այն դեպքում, եթե տեղեկանքն այդ պահին ներկայացնեք, ինչը բավարար չէ օրենքի պահանջներին:

Եթե Ձեզ համար պատասխանատու օտարերկրացիների գերատեսչությունը կասկածի տեղեկացված հիվանդության վրա, ապա պաշտոնապես կարող է կարգադրել բժշկական հետաքննություն : Եթե կարգադրությումբ ներկայացված բժշկական այդ տեղեկանքը հիմնավորված չլինի, ապա գերատեսչությունը արտաքսման ժամանակ այդ հիվանդությունն ի նկատի չի առնի:

Իրազեկում ըստ կեցության իրավունքի § 50 պարբ. 4

Ձեր արտագաղթման պատճառով Դուք պարտավոր եք ըստ կեցության իրավունքի § 50 պարբ. 4, յուրաքանչյուր անգամ բնակարանը փոխելուց և երեք օրից ավել ժամկետով տարածաշրջանից դուրս գալուց առաջ տեղեկացնել օտարերկրացիների գերատեսչությանը: Եթե Դուք խախտեք այս պարտականությունը, ապա պետք է ի նկատի առնեք, որ Ձեզ արտաքսման համար կբանդարկեն ըստ կեցության իրավունքի
(§ 62 թիվ 3 կետ 2):